որ քիչ—քիչ իրարից հեռանում են և բաժանվում։ Ցայտնի են նաև այնպիսի դեպքեր, երբ սերմն ընկնելով հողի վրայ, հանդիպում է այնտեղ փթած ոսկորների։ սերմի արմատները ծակում են ոսկորը և միւս կողմից շարունակում աճել։ Տասը տարի առաջ Սեվաստոպոլի մատ մի սպիտակ ակացիա է դանուել, որի արմատները ոսկորների միջով են անցնում։ Սրանք բոլորը ապացուցանում են, որ աճող արմատները սարսափելի ոյժ ունին։ Այժմ հասկանալի կլինի, որ եթէ ծառի սերմը քամուց տարուում ժայռի փոքրիկ ճեղքի մէջ է ընկնում, նա կարող է իւր համար ժայռի մէջ ճանապարհ հարթել, ճեղքը մեծացնել, երբ հարկաւոր է, քարեր պոկել, և եթէ փոշու միջոցով բաւականաչափ հող հաւաքուի այս ժայռի ճեղքի մէջ, այն ժամանակ ծառը ազատ կզարգանայ։ Շատ անգամ էլ պատահում է, որ ժայռից քարեր են պոկուում և թափուում ցած, ծառը ծածկում. եթէ արմատից նոր ծլեր դուրս գան և քարի շուրջը ճիւղեր տան, ժամանակին դրանք մեծանալով և զօրանալով իրանց հետ վերև կբարձրացնեն քարերը։ Ոչ միայն բնութեան, քարերի և ժայռերի հետ, այլ և մարդկանց շինութիւնների հետ էլ ծառերը մրցում են և շատ անգամ յաղթող հանդիսանում։ Ցանկապատի շատ ճաղեր երբեմն յենուում են ծառերի բնին, իսկ ծառն էլ իւր կողմից աշխատում է նրանց իւր մէջն առնել, որ և շատ անգամ յաջողւում է։ Միացեալ—Նահանգներում վերջին պատերազմների ժամանակ մի խոնաւ դաշտի մէջ մոռացուած մնացին պատերազմական սայլեր. այդտեղ սկսեց աճել ուռենի, որ և շուտով ճիւղեր արձակելով շատ սայլեր իւր մէջն առաւ. ճիւղերն անցան անիւների շառաւիղների միջով և բոլորն էլ փչացրին։ Երբ եկան և ուզում էին սայլակները բաժանել, ոչ մի կերպ չկարողացան ամբողջութեամբ հանել նրանց, այլ բոլորը կտոր—կտոր էին եղել։

ՍՈՒՐ ՄՏՔԵՐ

Բաղդից հրաժարուել կարողանալը—բաղդ է։

—

Թեթևամիտը մոռանում է—ազնուամիտը ներում։

—

Երբեմն հարկաւոր չէ լինում խօսել, որովհետև լռելով չափազանց շատ բան ասած կլինէինք։

—

Նա, որ լաց շատ է տեսել՝ անձկութեամբ է ողջունում բաղդի ճառագայթը։ Զէ՞ որ գիտէ, թէ ինչքան վրտանգաւոր է արևի երևալը փոթորկոտ եղանակին։

—

Հանճարը նուաճում է աշխարհը, բայց նորա իսկական տէրը միջակութիւնն է։



ՊԱՏԱՍԽԱՆԻՔ.

Արմաւիր, պ. Ս. Շահանեան.—Ձեր «պատասխան»ը տպել չենք կարող, որովհետև չի կարելի թերթի մէջ առանձին բաժին բանալ մի աննշան փոքրիկ գրքոյկ այս ու այն կողմ քաշքշել տալու համար. առանց այն նորա քննադատութեան աւելի տեղ էր տուած, քան կարժէր։ Քննադատութեան դէմ նոր, կրկնապատիկ ծաւալ ունեցող՝ քննադատութիւններ գրել ո՛չ մի տեղ ընդունուած չէ. կարելի է միայն մի քանի տողով աւղղել պատահական թիւրիմացութիւնները. այլապէս ընթերցողը կարող է գիրքն էլ կարդալ, քննադատութիւնն էլ ու իւր եզրակացութիւնները հանել։ Իսկ եթէ Դուք կամենում էք նոր ի նորոյ բացատրել Ձեր տեսութիւններն ու աւելի ընդարձակել, նոր գիրք գրեցէ՛ք, կամ աւելի պատշաճ լեզուով մի յօդուած՝ յարմար այն թերթին, որին գիմում էք։

Նոր—Դարի խմբագրութեանը.—Կկատարէինք սիրով Ձեր խորհուրդը և Ձեր ակնարկած բրոշիւրը կկարդայինք, բայց մեր ձեռքը չի հասել։ Կարդացինք Ձեր յառաջ բերած նամակը և Թումայեանի դէմ ուղղուած ուրիշ գրութիւններ. սակայն պատճառ չենք գտնում նոցա աւելի հաւատ ընծայելու, քան Թումայեանի հերքումներին ու մեղադրանքներին. այդ բոլոր բրոշիւրներն ու նամակները հաւասար արժէք ունին մեր աչքում. կեղտոտ ջրի մէջ կեղտոտ ձեռքեր են լուացուում,—արի՛ որոշիր, թէ ո՛ւմ ձեռքերն աւելի կեղտոտ են։ Այդպիսի որոշումներ ա-